

րոնք կը ծամածռէին իրենց երեսը, բե-
րանն ու աչքը, կը հտպտէին եւ կը պար-
սաւէին զուրիշները (Ոսկ. Թղթ. Ա, 851):
Այս երջանիկ ցնծութիւնը կը շարունակէ
դեռ Բագրատունեաց օրով եւս, ուր մեր
աւագանին «նստէին յիշխանական գահու»,
որ յայտնի է թէ տաճարի բազմականներն
են, եւ անոնց առջեւ «ռարսխական երգոց
եւ թանկից միայն լինէին հանդէսը»․ ու փո-
ղերու, ծնծղայից եւ այլ գործիներու ձայ-
ները կը հեշտացնէին անոնց լսելիքը (Լաստ.
38): Շնորհալին կը վրդովէր՝ «ի լսելն եւ
ի խօսել զանուղղայս՝» հարսանեկան խըն-
ճոյից մէջ եւս (Բնդհ. 42): Աւաւկայ որ-
դին կը փորձէ կանոնական կապեր գծել
այդ «հեթանոսական ամօթալից զրուցա-
տրութեան» դէմ (ԻԳ): Բայց Հայն իւր
սովորոյթներէն դիւրաւ չի հրաժարիր. ու
մինչեւ ժե դար Տաթեւացին դեռ կը տես-
նէր հարսանեաց մէջ «բազում անվայելուչ
բանք» կամ «խեղկատակութիւն» (Յովհ.
Բ, 2):

Բ. Վարձակները¹, որ էին աւելի քան
վարձուած՝ վարժ կամ երաժիշտ կանայք,
— եւ այդ կոչումը սովորաբար կանանց

1. Արմատը վարձ՝ համեմատել ընդ վարժ կամ պրս.
վարզ (եւ մարզել՝ մարձել, մարզիկ՝ մարձիկ, մարզիչ՝
մարձիչ). իսկ վարզին իմաստն՝ ուսումն, աշխատութիւն,